Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ՄՈՒԶԱՆ

Այն ժամանակ ես արդեն իմ առաջին ջահելությունը չէի ապրում, բայց խելքիս փչեց գեղանկարչություն սովորել,— ասեմ, որ միշտ էլ մեծ սեր ունեի գեղանկարչության,— և թողնելով Տամբովի նահանգի կալվածքս, ձմեռն անցկացրի Մոսկվայում, պարապում էի մի անտաղանդ, բայց բավական հայտնի նկարչի մոտ, փնթի, գեր մի մարդու, որ հիանալի յուրացրել էր, թե իրեն ինչ է պետք ու ինչ պիտի անի. երկար մազեր՝ խոշոր ճարպոտ գանգուրներով թափված ծոծրակին, ծխամորճ՝ ատամների արանքում, թավշյա նոնագույն բաճկոն, կոշիկներին կեղտոտ գորշավուն զանկապաններ, որ հատկապես էի ատում, անփույթ վարվելակերպ, զիջողամիտ տեսքով աչքերը կկոցած դիտում աշակերտի աշխատանքի, և հետն էլ, իբր ինքն իրեն.

— Հետաքրքիր է, հետաքրքիր... Ակներև հաջողություն…

Ապրում էի Արբատում, «Պրագա» ռեստորանի մոտերքը, «Ստոլիցա» հյուրանոցում: Ցերեկն աշխատում էի նկարչի տանը, երեկոները հաճախ անցկացնում էժանագին ռեստորաններում բոհեմային զանազան նոր ծանոթների հետ՝ և ջահել, և հալից ընկած, բայց հավասարապես բիլիարդի և խեցգետնով գարեջրի սիրահար... Անհաճո ու տաղտկալի էր կյանքս: Այդ կնանման, անմաքուր նկարիչը, նրա «արտիստական» կեղտոտ ու թափթփված, ամեն տեսակի իրերով լցված արվեստանոցը, այդ մռայլ «Ստոլիցա»-ն... Հիշողությանս մեջ մնացել է, պատուհանից դուրս ձյուն անդադար, խուլ դղրդում, զնգզնգում են Արբատում ձիաքարշերը, իրիկունները գարեջրի թթվահոտ ու գազահոտ աղոտ լուսավորված ռեստորանում... Չգիտեմ ինչու էի այդպիսի խղճուկ գոյություն քարշ տալիս. այն ժամանակ բնավ աղքատ չէի ես:

Բայց ահա մի անգամ մարտ ամսին, երբ տանը նստած աշխատում էի մատիտով, ու կրկնակի լուսամուտափեղկերի բաց օդանցքից արդեն ոչ ձմռան խոնավության ու թաց ձյան ու անձրևի շունչ էր ներս լցվում, երբ ոչ ձմեռային էին դոփում ձիերի պայտերը սալարկին ու կարծես ավելի երաժշտական էին զնգզնգում ձիաքարշերը, մեկը բախեց նախասենյակիս դուռը: Ձայն տվեցի. ո՞վ է, բայց պատասխան չլսեցի: Սպասեցի, նորից ձայն տվեցի՝ նորից լռություն, և հետո՝ նոր բախոց: Վեր կացա, դուռը բացեցի. շեմքին կանգնած էր բարձրահասակ մի աղջիկ մոխրագույն կոշիկներով, կանգնել ու նայում է ուղիղ աչքերիս, աչքերը կաղինի գույնի, երկար թարթիչներին, դեմքին և գլխարկի տակից դուրս եկած մազերին անձրևի և ձյան կաթիլներ են փայլփլում. նայում է ու ասում.

— Ես կոնսերվատորիական եմ, Մուզա Գրաֆ: Լսել եմ, որ դուք հետաքրքիր մարդ եք ու եկել եմ ծանոթանալու: Դուք դեմ չե՞ք:

Բավական զարմացած, պատասխանեցի, իհարկե, սիրալիր.

— Չափազանց շոյված եմ, համեցեք խնդրեմ: Միայն պետք է զգուշացնեմ, որ ձեզ հասած լուրերը հազիվ թե ճիշտ լինեն. իմ մեջ ոչ մի հետաքրքիր բան չկա:

— Համենայն դեպս թույլ տվեք ինձ ներս գալ, այսպես դռան առաջ մի պահեք,— ասաց նա, շարունակելով նայել ուղիղ աչքերիս:— Շոյված եք, ուրեմն, ընդունեք:

Եվ ներս գալով, սկսեց ինչպես իր տանը, իմ մոխրաարծաթավուն, տեղ-տեղ սևացած հայելու առաջ հանել գլխարկը, ուղղել ժանգագույն մազերը, հանեց աթոռին նետեց վերարկուն, մնալով ֆլանելե վանդականախշ զգեստով, նստեց բազմոցին, ձյունից ու անձրևից թաց քիթը վեր քաշելով, հրամայեց.

— Հանեք հագիցս կոշիկներս ու վերարկուիս գրպանից տվեք ինձ թաշկինակս:

Տվեցի նրան թաշկինակը, նա քիթը սրբեց ու ինձ մեկնեց ոտքերը:

— Երեկ ձեզ տեսա Շորի համերգին,— անտարբեր ասաց նա:
Հաճույքի ու զարմանքի հիմար ժպիտս զսպելով,— սա ինչ տարօրինակ հյուր է,— հնազանդորեն մեկը մյուսի ետևից հանեցի կոշիկները: Նրանից դեռ օդի թարմ բուրմունք էի զգում, և ինձ հուզում էր այդ բուրմունքը, հուզում էր տղամարդկային այդ քաջությունը միախառնված կանացի ջահել այն ամենի հետ, ինչ կար նրա դեմքին, նրա շիտակ աչքերի, խոշոր և գեղեցիկ ձեռքի մեջ, այն ամենի մեջ, ինչ տեսա և զգացի զգեստի տակից քաշելով նրա կոշիկները, որի տակ կլորիկ ու պինդ նրա ծնկներն էին, բարակ մոխրագույն գուլպայի տակից երևացող նրա պիրկ սրնքամսերը և երկարուկ ոտնաթաթերը լաքե բաց կիսակոշիկների մեջ:

Հետո նա հարմար տեղավորվեց բազմոցին, երևում է, շուտ չգնալու մտադրությամբ: Չիմանալով ինչ խոսել, սկսեցի նրան հարցուփորձ անել, թե ումից և ինչ է լսել իմ մասին, և ով է ինքը, ում հետ է ապրում: Նա պատասխանեց.

— Թե ումից և ինչ եմ լսել, կարևոր չէ: Եկա շատը այն պատճառով, որ տեսել էի ձեզ համերգում: Դուք բավական գեղեցիկ եք: Իսկ ես բժշկի աղջիկ եմ, ապրում եմ ձեզնից ոչ հեռու, Պրեչիստենսկի բուլվարում:

Նա խոսում էր մի տեսակ անսպասելի և կարճ: Ես դարձյալ չիմանալով, թե ինչ խոսեմ, հարցրի.

— Թեյ ուզո՞ւմ եք:

— Ուզում եմ,— ասաց նա:— Եվ հրամայեցեք, եթե փող ունեք, որ Բելովի մոտից ռանետ խնձոր գնեն, այստեղ, Արբատի վրա: Միայն շտապեցրեք հերթապահ ծառայողին, ես անհամբեր մարդ եմ:

— Իսկ թվում եք այնքա՛ն հանգիստ:

— Շատ բան եմ թվում…

Երբ ծառայողը բերեց ինքնաեռն ու տոպրակով խնձորը, նա թեյ պատրաստեց, գավաթները, գդալները նորից սրբեց... Եվ մի խնձոր ուտելուց ու մի գավաթ թեյ խմելուց հետո ավելի խոր նստեց բազմոցին ու ձեռքը թփթփացրեց իր կողքին.

— Հիմա նստեք մոտս:

Նստեցի, նա փաթաթվեց ինձ և անշտապ համբուրեց շրթունքներս, ետ քաշվեց, նայեց ու կարծես համոզվելով որ արժանի եմ դրան, աչքերը փակեց ու նորից համբուրեց՝ պինդ, երկար:

— Այսպես,— ասաց, կարծես թեթևացած:— Ավելին առայժմ չի կարելի: Վաղը չէ մյուս օրը:

Սենյակում արդեն բոլորովին մութ էր, միայն թախծալի կիսալույս էր թափանցում փողոցի լապտերներից: Թե ինչ էի զգում ես, դժվար չէ պատկերացնել: Որտեղից հանկարծ այսպիսի երջանկություն: Ջահել, ուժեղ, շրթունքների համն ու ձևը չտեսնված... Ոնց որ երազի մեջ լսում էի ձիաքարշերի միալար զնգզնգոցն ու սմբակների դոփյունը…

— Ուզում եմ վաղը չէ մյուս օրը ձեզ հետ ճաշել «Պրագայում»,— ասաց նա:— Երբեք չեմ եղել և ընդհանրապես շատ անփորձ եմ: Պատկերացնում եմ, թե ինչ եք մտածում իմ մասին: Իսկ իրականում դուք իմ առաջին սերն եք:

— Սե՞րը:

— Իսկ ուրիշ ինչպե՞ս է դա կոչվում:

Ուսումնառությունս, իհարկե, շուտով թողեցի, նա իրենը մի կերպ շարունակում էր: Մենք չէինք բաժանվում, ապրում էինք իսկական նորապսակների նման, շրջում պատկերասրահներում, ցուցահանդեսներում, լսում էինք համերգներ ու նույնիսկ չգիտես ինչու հրապարակային դասախոսություններ... Մայիսին, նրա ցանկությամբ, տեղափոխվեցի մերձմոսկովյան մի հինավուրց դաստակերտ, ուր կարգի էին բերված ու վարձով էին տրվում փոքրիկ ամառանոցներ, և նա սկսեց գալ ինձ մոտ ու Մոսկվա վերադառնալ գիշերվա ժամը մեկին: Եվ դա էլ ինձ համար բոլորովին անսպասելի էր՝ ամառանոց Մոսկվայի մոտերքը, երբեք չէի ապրել ամառանոցավորի կյանքով, առանց բան ու գործի, այնպիսի դաստակերտում, որ բնավ նման չէր մեր տափաստանային կալվածատներին, այսպիսի կլիմայական պայմաններում:

Շարունակ անձրև էր, շուրջը սոճու անտառներ: Շուտ-շուտ երկնքի ջինջ կապույտում սպիտակ ամպեր էին կուտակվում անտառների գլխին, բարձրում դղրդում էր որոտը, արևի միջով սկսում էր թափվել փայլփլուն անձրևը, որ տոթից արագ փոխվում էր անուշաբույր սոճու գոլորշիների... Ամեն ինչ թաց էր, թանձր, հայելափայլ… Կալվածատան այգու ծառերն այնքան մեծ էին, արանքներում տեղ-տեղ սարքված ամառանոցները նրանց տակ թվում էին փոքր, ինչպես արևադարձային երկրների ծառերի տակ սարքված կացարանները: Լճակը նման էր վիթխարի սև հայելու, կիսով չափ ծածկված կանաչ փարաջայով... Ես ապրում էի այգու ծայրին, անտառում: Գերաններից սարքված իմ ամառանոցը դեռ ավարտված չէր. կիսատ մնացած պատեր, չտաշված

հատակ, առանց կափարիչի վառարաններ, կահ-կարասի գրեթե չկար: Եվ մշտական խոնավությունից մահճակալիս տակ կոշիկներս ծածկվել էին բորբոսի թավշով:

Իրիկունները մթնում էր միայն կեսգիշերվա մոտ. մնում ու մնում էր արևմուտքի կիսալույսը անշարժ, խաղաղ անտառների վրա: Լուսնյակ գիշերներին այդ կիսալույսը տարօրինակ կերպով խառնվում էր լուսնի լույսին, նույնպես անշարժ, կախարդական: Եվ ամենուր տիրող այդ խաղաղությունից, երկնքի ու օդի մաքրությունից շարունակ թվում էր, թե այլևս անձրև չի լինի: Բայց ահա, նրան կայարան ճանապարհելով, պառկում էի քնելու ու հանկարծ լսում տանիքին նորից տեղատարափ էր թափվում որոտի ճայթյուններով, շուրջը մթություն է և ուղղագիծ իջնող կայծակներ... Առավոտյան բաց մանուշակագույն գետնին և խոնավ ծառուղիներում կայծկլտում էին արևի ստվերներն ու կուրացուցիչ լուսակետերը, չխկչխկում էին ճանճորս կոչվող թռչունները, խուլ ճռճռում էին կեռնեխները: Կեսօրին նորից սկսվում էր տոթը, ամպեր էին կուտակվում և անձրև էր թափվում: Մայրամուտից առաջ եղանակը պարզվում էր, իմ գերանակապ տան պատերին դողդողում ու թփերի արանքից պատուհանիս էր ընկնում ցած արեգակի բյուրեղյա-ոսկե ցանցը: Եվ այդժամ գնում էի կայարան նրան դիմավորելու: Մոտենում էր գնացքը, կառամատույց էին թափվում անթիվ-անհամար ամառանոցավորներ, շոգեքարշի քարածխահոտ ու անտառների խոնավ թարմության շունչ էր զգացվում, ամբոխի մեջ երևում էր նա խորտիկների փաթեթներով, մրգով ու մի շիշ մադերայով լցված ցանցազամբյուղով ծանրաբեռնված... Երկուսով մեն-մենակ ճաշում էինք սիրով: Նրա ուշ վերադարձից առաջ թափառում այգում: Նա քայլում էր լուսնոտի նման, գլուխը ուսիս թեքած… Սև լճակը, դարավոր ծառերը, որ վեր էին խոյանում աստղալից երկինք... Կախարդական լույս գիշեր, անսահմանորեն խաղաղ, ծառերի անվերջանալի երկար ստվերներով արծաթափայլ լճանման բացատներին:

Հունիսին նա ինձ հետ մեկնեց իմ գյուղ,— առանց պսակվելու սկսեց ապրել հետս, ինչպես կինս, սկսեց տանտիկնություն անել: Երկար աշունն անցկացրեց անձանձրույթ, առօրյա հոգսերով, ընթերցանությամբ կլանված: Հարևաններից մեզ մոտ ամենից հաճախ լինում էր ոմն Զավիստովսկի, միայնակ, աղքատ կալվածատեր, որ ապրում էր մեզնից երկու վերստի վրա, փոքրամարմին, շիկամազ, վեհերոտ, ոչ շատ խելացի՝ և ոչ վատ երաժիշտ: Ձմռանը սկսեց մեզ մոտ գալ գրեթե ամեն երեկո: Նրան ճանաչում էի մանկուց, իսկ հիմա այնքան էի կապվել նրա հետ, որ երեկոն առանց նրա անցկացնելը անսովոր էր ինձ համար: Ես ու նա տամայաքար էինք խաղում, կամ էլ նրանք իրար հետ դաշնամուր էին նվագում չորս ձեռքով:

Ծնունդից առաջ այնպես պատահեց, որ գնացի քաղաք: Վերադարձա արդեն լուսնի լույսով: Տուն մտա, բայց նրան ոչ մի տեղ չգտա: Ինքնաեռի մոտ թեյ խմելու նստեցի մենակ:

— Իսկ տիրուհին ո՞ւր է, Դունյա: Գնացել է զբոսնելո՞ւ:

—Չգիտեմ: Տիկինը տանը չէ հենց առավոտից:

— Հագնվեց ու գնաց,— մռայլ ասաց իմ ծեր դայակը, անցնելով ճաշասենյակով առանց գլուխը բարձրացնելու:

«Երևի Զավիստովսկու մոտ է գնացել,— մտածեցի։— Հավանաբար շուտով կգա նրա հետ, արդեն ժամը յոթն է...»։ Գնացի պառկեցի առանձնասենյակումս և միանգամից քնեցի։ Ամբողջ օրը սառել էի ճանապարհին։ Ճիշտ նույն կերպ միանգամից էլ արթնացա մի ժամից՝ հստակ ու զարհուրելի մի մտքով. «Ախր նա ինձ լքել է։ Գյուղում վարձել է մի գյուղացի ու գնացել կայարան, Մոսկվա։ Նրանից ամեն ինչ սպասելի է։ Բայց գուցե արդեն վերադարձե՞լ է»։ Ման եկա տանը՝ չկար, չէր վերադարձել։ Ամաչում էի ծառաներից…

Ժամը տասի մոտ, չիմանալով էլ ինչ անել, հագա կիսամուշտակս, չգիտես ինչու վերցրի հրացանն ու մեծ ճամփով գնացի Զավիստովսկու մոտ, մտածելով. «Կարծես դիտմամբ նա էլ այսօր չեկավ, իսկ իմ առջև դեռ մի երկար սարսափելի գիշեր կա։ Մի՞թե նա իսկապես մեկնել է, լքել ինձ։ Ոչ, ոչ, չի կարող պատահել»։ Քայլում եմ ճռճռոցով ձյան մեջ անվահետքերից բացված ճամփով, ձախից փայլում են ձյունածածկ դաշտերը ցած, խղճուկ լուսնի տակ... Մեծ ճամփից թեքվեցի ու քայլեցի դեպի Զավիստովսկու խղճուկ կալվածատունը. մերկ ծառերով ծառուղի, որ դաշտի միջով տանում էր դեպի այն տունը, հետո բակամուտքը, ձախ կողմում էին, աղքատիկ տունը, տանը մութ էր... Բարձրացա սառցակալած առմուտք, դժվարությամբ բացեցի ծանր դուռը պաստառի ծվեններով. նախասենյակում կարմրին էր տալիս բաց ու արդեն հանգչող վառարանը, տաք էր և մթություն... Սակայն մութ էր և սրահը։

— Վիկենտի Վիկենտիչ։

Եվ նա անաղմուկ, թաղյակներով հայտնվեց առանձնասենյակի շեմքին, որ նույնպես լուսավորված էր միայն եռափեղկ պատուհանից թափանցող լուսնի լույսով.

— Ահ, դուք եք... Ներս եկեք, ներս եկեք խնդրեմ… Իսկ ես, ինչպես տեսնում եք, նստել եմ առանց լույս, երեկոս անց եմ կացնում առանց լույս վառելու…

Ներս մտա ու նստեցի խորդուբորդ բազմոցին։

— Պատկերացնում եք, Մուզան անհետացել է չգիտեմ ուր…

Նա լռեց։ Հետո գրեթե անլսելի ձայնով.

— Այո, այո, ձեզ հասկանում եմ…

— Այսինքն ի՞նչ եք հասկանում։
Եվ անմիջապես, նորից անձայն, նորից թաղյակներով, շալը ուսին գցած ննջարանից, որ առանձնասենյակի կողքին էր, դուրս եկավ Մուզան։

— Դուք հրացանով եք,— ասաց նա։— Եթե ուզում եք կրակել, կրակեցեք ոչ թե նրա, այլ ինձ վրա։

Ու նստեց մյուս բազմոցին, դիմացս։

Նայեցի նրա թաղյակներին, մոխրագույն տակից երևացող ծնկներին. ամեն ինչ լավ երևում էր պատուհանից թափանցող ոսկեգույն լույսի տակ, ուզում էի բղավել. «Ես առանց քեզ չեմ

կարող ապրել, միայն այդ ծնկների, այդ շրջազգեստի, այդ թաղյակների համար կյանքս կարող եմ տալ»:

— Պարզ և վերջացած բան է,— ասաց նա:— Տեսարաններն ավելորդ են:

— Դուք զարհուրելի դաժան եք,— դժվարությամբ կարողացա ասել ես:

— Ինձ գլանակ տուր,— դիմեց նա Զավիստովսկուն:

Սա վախվորած մոտեցավ նրան, մեկնեց ծխախոտատուփը, սկսեց գրպանում լուցկի փնտրել…

— Դուք ինձ ետ արդեն դուք-ով եք խոսում,— շունչս կտրվելով, ասացի նրան,— կարող էիք գոնե իմ ներկայությամբ նրա հետ դու-ով չխոսել:

— Ինչո՞ւ,— հարցրեց, հոնքերը վեր քաշելով, ծխախոտը մատների մեջ հեռու պահած:

Սիրտս թպրտում էր արդեն կոկորդիս մեջ, զարկվում քունքերումս: Վեր կացա և, երերալով, դուրս եկա, գնացի:

17 հոկտեմբերի 1938